ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի փետրվարի 20-ից 24-ը

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Սոսե Ստեփանյան, ՊԵԿ նախագահի խորհրդական

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, փետրվարի 20-ից 24-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Համաշխարհային մաքսային կազմակերպության Կարողությունների զարգացման կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) ՀՄԿ խորհրդի և քաղաքականության հարցերով հանձնաժողովի ենթակայությամբ գործող մարմին է, որի հիմնական նպատակը անդամ պետություններում կարողությունների զարգացման ուղղությամբ աշխատանքների և ուսումնասիրությունների իրականացումն է և համապատասխան ուղեցույցների, ստանդարտների ու գործիքների մշակումը: Այն անցկացվում է տարին մեկ անգամ և Կոմիտեի անդամ են հանդիսանում ՀՄԿ անդամ բոլոր պետությունները: Նստաշրջանի ընթացքում քննարկվում են կարողությունների զարգացման ոլորտի առաջնահերթությունները և այդ ուղղությամբ մշակված նոր գործիքները, ստադարտները, որոնք ենթակա են հավանության արժանացման Կոմիտեի կողմից. ընդ որում՝ որոշումներն ընդունվում են կոնսենսուսի սկզբունքով: Նստաշրջանին չմասնակցելու դեպքում հնարավոր չէր լինի մասնակցել որոշումների կայացմանը, տեղեկանալ կարողությունների զարգացման ոլորտում ՀՄԿ մշակած նոր

գործիքներին, ինչպես նաև այս ոլորտում այլ երկրների փորձին և տարբեր երկրների հետ փոխանակել համապատասխան տեղեկատվություն:

5. Քննարկված թեմաները՝

Կոմիտեում տեղի են ունեցել քննարկումներ՝ տեխնոլոգիական առաջընթացի և նորարարության խթանման մասով առավել առարկայական կարողությունների զարգացման մեխանիզմներ ներդնելու, այդ թվում՝ տվյալների ու վիճակագրության վարման կարողությունները անդամ պետություններում զարգացնելու մասով, ինչպես նաև թվային ուսուցման շրջանակների ընդլայնման, մաքսային համակարգում կայուն աշխատանքային մոդել զարգացնելու, ազգային ուսուցման ռազմավարություններ զարգացնելու, կառավարման ու ղեկավարման հմտությունները զարգացնելու, սեռային հավասարության, ՀՄԿ-ի կողմից ակրեդիտացված փորձագետների շարժունակությանն առնչվող հարցեր: Քննարկվել են նաև ԱՀԿ Առևտրի դյուրացման համաձայնագրի արդյունավետ իրականացման ուղղությամբ կարողությունների զարգացման հեռանկարները, զգայուն ու կոնֆլիկտածին իրավիճակում կարողությունների զարգացման ծրագրերը և «Կանաչ մաքսային մարմին» գործողությունների պլանի կարողությունների զարգացման ուղղությունները:

6.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Նստաշրջանի սկզբում ՀՄԿ քարտուղարությունը անդամ պետությունների, դոնորների ու գործընկեր ընկերությունների համար քննարկման հարթակ է ապահովել՝ կարողությունների զարգացման կարիքները հասկանալու, գնահատելու և առաջնայնությունը որոշելու նպատակով: Այնուհետև ՀՄԿ-ի կողմից անդրադարձ է արվել Բակուդա ծրագրի առավելություններին: Ներկայացվել է նաև ՀՄԿ հեռավար ուսուցման զարգացման ռազմավարությունը, որի մասով անդամ պետությունները դիրքորոշումներ են ներկայացրել, առաջադրել որոշակի փոփոխություններ, և ներկայացված փոփոխությունների հաշվառմամբ ռազմավարությունն ընդունվել է՝ ՀՄԿ քաղաքականության կոմիտեի քննարկմանը ներկայացնելու համար: Անդամ երկրների քննարկմանն է ներկայացվել նաև Աշխատանքի կազմակերպման, աշխատատեղերի նախագծման և աշխատուժի կառավարման լավագույն փորձի

կոմպենդիումը, որը ևս հավանության է արժանացել Կոմիտեի կողմից: Ներկայացվել է նաև անդամ պետություններում մաքսային ուսուցման ծրագրերի մասով անդամ պետություններին ուղարկված հարցաշարերի ամփոփման արդյունքները, ինչի արդյունքում առաջարկվել է մշակել ուղեցույց՝ անդամ պետություններում ազգային ուսուցման ծրագրերի զարգացման ռազմավարությունների մշակման համար: ՀՄԿ քարտուղարությունը նկարագրել է նաև ՀՄԿ-ի կողմից փորձագետների հավատարմագրման գործընթացը և այս ուղղությամբ նախատեսվելիք քայլերը: Քննարկվել են ԱՀԿ Առևտրի դյուրացման համաձայնագրի շրջանակում իրականացվող Մերկատոր ծրագրով կարողությունների զարգացման ծրագրի շրջանակները և դրա պոտենցիալ օգուտները: Նստաշրջանի ընթացքում ներկայացվել է նաև մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտում Դոմինիկյան Հանրապետության փորձը, իսկ ՀՄԿ Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի կարողությունների զարգացման տարածաշրջանային գրասենյակը ներկայացրել է տարածաշրջանում իրականացվելիք կարողությունների զարգացման ծրագրերը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման արդյունքներով Կոմիտեն հավանություն է տվել Աշխատանքի կազմակերպման, աշխատատեղերի նախագծման և աշխատուժի կառավարման լավագույն փորձի կոմպենդիումին, ՀՄԿ հեռավար ուսուցման զարգացման ռազմավարությանը, ինչպես նաև Կարողությունների զարգացման աշխատանքային պլանի 2024-25թթ փոփոխություններին ու դրանով պայմանավորված՝ ՀՄԿ ռազմավարության 2024-25թթ իրականացման ծրագրի փոփոխություններին:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպումների ժամանակ ստացված տեղեկատվությունը կկիրառվի ՊԵԿ կարողությունների զարգացման գործընթացում, այդ թվում՝ ՊԵԿ մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգի ներդրման, ինչպես նաև մաքսային

ուսումնական ծրագրերի, այդ թվում՝ հեռավար, զարգացման շրջանակներում: Միաժամանակ, քննարկված մի շարք փաստաթղթեր ներկայացվելու են ՀՄԿ Խորհրդի տարեկան քննարկմանը՝ վերջնական հաստատվելու նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

28.02.2024թ.